Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 22 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական մասնագիտակված դպրոցի կառուցման հեղինակային հսկողություն», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Մեծ Շեն գյուղի համայնքային կենտրոնի կահավորում», «Երևան քաղաքի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի կահավորման 2-րդ փուլ» և « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի ծնարանային և հետծննդյան բաժինների մասնակի հիմնանորոգում» ծրագրերը.

«Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» (3-րդ փուլ) և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գվերակռուցման և ընդարձակման նախագծում» (1-ին փուլ) ծրագրերը.

«Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի կին գիտաշխատողին» ծրագիրը, որի նպատակն է ՀՀ-ում գիտական համակարգի տեխնիկական զարգացում ու արդիականացում, միջազգային գիտական համակարգին ՀՀ գիտական հանրության ինտեգրում և մտավոր ներուժի արտահոսքի կանխում.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի բնագիտական լսարանի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի թիվ 1 ներառական կրթությամբ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ճաշարանի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի թիվ 1 ներառական կրթությամբ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ճաշարանի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք

համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ և Ներքին Կարմիրաղբյուր համայնքներում մանկապարտեզների մասնակի վերանորոգում», «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի «Վաչիկ Եղիազարյանի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Համբարձում Ոսկանյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և «Վարդենուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին» ծրագրերը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի համայնքներում, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի համայնքներում, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի համայնքներում և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքներում իրականացվող ծրագրերը, որոնց նպատակն է բարելավել տվյալ տարածաշրջաններում անասնագլխաքանակի կաթնատվությունը և մսատվությունը՝ իրականացնելով անվճար արհեստական սերմնավորում.

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2012 թվականի ընթացքում իրականացվող Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին լվացքատան սարքավորումների նվիրատվություն» բարեգործական ծրագիրը.

Գյումրու «Շիրակ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թորոս գյուղ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիրը:

«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն խոցելի խմբերին» ծրագիրը.

«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բնակարաններ» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: